ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԱՐՈՆ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՅԱՑԻՐ

Հարգելի՛ պարոն Մուրադյան,

Ձեզ եմ ներկայացնում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գնումների համակարգման բաժնի փորձագետ Լիանա Մկրտչյանի 12.07.2023-17.10.2023 թթ. ժամանակահատվածի համար կատարված աշխատանքների վերաբերյալ համառոտ հաշվետվությունը:

Առդիր՝ 3 էջ:

Հարգանքով՝ Ք. Մայիլյան

17.10.2023թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԼԻԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՑ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ՔՐԻՍՏԻՆԵ ՄԱՅԻԼՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

12.07.2023- 17.10.2023 թթ. ժամանակահատվածի համար

Հաշվետու ժամանակահատվածում իմ կողմից գլխավոր քարտուղարի և /կամ/ բաժնի պետի գրավոր կամ բանավոր հանձնարարությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2024 թվականի կարիքների համար գնման գործընթացները կենտրոնացված կարգով կազմակերպելու նպատակով ՊՈԱԿ-ների կողմից սննդամթերքի, հանդերձանքի և անկողնային պարագաների, տնտեսական, սանիհիգիենիկ և մաքրիչ նյութերի ձեռքբերման գնման հայտերի վերանայում, հավաքագրում, ամփոփում:
- Նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2023 թվականի կարիքների համար կենցաղային և համակարգչային տեխնիկայի, ինչպես նաև տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով գնման ընթացակարգերի հայտարարում:
- Նախարարության 2024 թվականի կարիքների համար կենցաղային և հանրային սննդի նյութերի, ինչպես նաև ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգերին առնչվող փաստաթղթերի կազմում, շրջանառում /գնումների պլան, գնահատող հանձնաժողովի կազմը հաստատելու մասին հրաման, հրավեր/:
- Գնման ընթացակարգերի շրջանակներում կնքված պայմանագրերին կից կնքվելիք համաձայնագրերի կազմում, շրջանառում:

- Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսվելիք միջոցների հաշվին իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններին դրամաշնորհների հատկացման նպատակով մրցութային հանձնաժողովներ ստեղծելու, դրանց անհատական կազմը և դրամաշնորհի հատկացման ընթացակարգը հաստատելու մասին հրամանի նախագծի կազմում, շրջանառում:
- Դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության պայմանագրի կատարման մասին ամենամսյա ամփոփ արձանագրությունների կազմում, ներկայացում հաստատման:
- Mulberry փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով մակագրված հանձնարարականների կատարում, գրությունների կազմում, շջանառում:
- Գնման ընթացակարգերի հայտարարության տեքստերի /հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով/, գնահատող հանձնաժողով ստեղծելու մասին հրամանների, ինչպես նաև պարտադիր հրապարակման ենթակա փաստաթղթերի նախագծերի կազմում և ներկայացում հաստատման:
- Գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկված ՊՈԱԿ-ների աշխատակիցներին մեթոդական օժանդակության ցուցաբերում՝ էլեկտրոնային եղանակով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատելու, գնման հայտերում արձանագրված անճշտությունները շտկելու, գնումների մասին ՀՀ օրենսդրության հետ կապված այլ հարցերի մասով:
- Գնման ընթացակարգերի հայտարարման նպատակով աշխատակարգային տվյալների մուտքագրում գնումների պլանավորման, պայմանագրերի կառավարման և հաշվետվողականության էլեկտրոնային ենթամոդուլ /ppcm/ համակարգ, անցում կատարելով eauction.armeps.am կամ armeps.am համակարգեր:

- Կազմակերպված գնման ընթացակարգերի փաստաթղթերի հրապարակում գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում:

Գնումների համակարգման բաժնի փորձագետ Լ. Մկրտչյան

17.10.2023թ.

Փոքրաքանակի գնումների
ՀՀԱՀՀ գնումների հանձնաժողովի
բաժնի փոքրաքանակի
գնումների 65 գծագրանշ